

Վահան Միրաբելի

# ՍԵՎ ԿԱԹԸ

ԴԱՏՄՎԱԾՔ



891.99 Մ  
Մ-76

ԳԵՐԱ  
ՀՐԱՄ

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ

2011 - 071

831.9305  
6-76

Խ

## ՍԵՎ ԿԱԹԸ

ՊԱՏՄՎԱԾՔ

Շատիկը յեղ Շկաբենոր Լեկոպէ Մելքոնյանի

ՊԵՏՉՐԱՑ

ՀՂԿՑԵՄ ԿԿ ԿԴ ՄԱՆԿԱՊԱՄԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺ  
ՁԵՐԵՎԱՆ 1916

11339  
n 2 JUL 2013

Դիրքս նվիրում եմ իմ քռոնիկ  
Վահանիկ Միրաքյանին:

1

Հեռնալին անտառապատ հովտում, վոր ձըգ-  
վում ե Լալվար սարի լանջերից մինչև Բորչալ-  
լուցի դաշտավայրը, մեկը մրւսի հետերից հու-  
լունքների նման շարված են մի քանի գյուղեր։  
Այդ հովտով հոսում ե Շուլավեր գետը, վորն  
սկիզբ առնելով Լալվար սարի լանջերից բղխող  
սառն աղբյուրներից, այժմ վոռոգում ե կոլխոզ-  
նիկների արտերը, արգիներն և պարտեզները։  
Կոլխոզնիկների տների կղմինդրե կարմիր տա-  
նիքներն առանձին զուզս ու գեղեցկություն են  
տալիս հովտի միապաղադ կանաչ գանգուրա-  
վոր ֆոնին։

Այդ գյուղերից մեկում ապրում եր ձոլունց  
Պողին։ Նա ուներ լեռեր վորդի՝ Արշոն, Սաշիկը



2735  
40

և Վահանիկը։ Արշոն Պողու անդրանիկ վարպետ  
եր։ Արշոլի հետ մի դեպք պատահեց, իերբ նա  
դեռ նոր եր սկսել ինքնիրեն ճանաչել։ Այն  
ժամանակ նրա հալր-Պողին Թաթոս աղի հոտի  
հովիվն եր։ Պողին, բացի Թաթոս աղի վոչխար-  
ներից, պահում եր նաև մի քանի համկալների\*)  
վոչխարներ հետեւալ պայմանով։ — աղաները յու-  
րաքանչլուր քսան վոչխարի համար պետք ե վը-  
ճարելին Պողուն-մեկ գառ, ամսական ուտելու  
հաց-չորս չանաղ ցորեն, գարի կամ կորեկ. արդ  
կախված եր տարվա բերքի հաջողությունից։  
Բայց շատ անգամ տերերը ոգտվելով Պողու խեղձ  
բնավորությունից, ամեն քալլափոխում շահա-  
գործում ելին նրան, ցորենի փոխարեն տալով  
կորեկ կամ գարի։ Վոտին հագնելու համար տա-  
լիս ելին նրան տարվա ընթացքում հինգ կամ  
վեց զուլգ տրեխացու կաշի։ Հաճախ տրեխները  
ժամանակից առաջ մաշելով, նա ստիպված եր  
լինում վոտաբորիկ թափառել հոտի լետեից։ Արդ  
պատճառով նրա վոտների ներքնամաշկն այն-  
քան եր կոշտացել, վոր վոտաբորիկ ման գալիս  
ել փշերը նրա վոտները չելին ծակոտում։ Ամ-  
բողջ տարվա համար նրան տալիս ելին մի հատ

ծածկոց-լափնջի կամ շինել։ Ալդ լափնջով նա  
պաշտպանվում եր թե՛ անձրկից, թե՛ ձյունից,  
իսկ գիշերները նույն լափնջին ծառայում եր  
նրան վորպես անկողին, Գիշերները նրա մեջ  
փաթաթված նա կուչ եր գալիս արխաջի\*) մի  
ծալրին՝ հոտին հսկելու համար, արխաջի մյուս  
ծալրին՝ իր սովոր վոլանում\*\*) նստած՝ նրան  
ոգնում եր իր հավատարիմ ընկերը — Պողունախ շու-  
նը։ Բացի այդ, վոչխարատերերը տարվա ընթաց-  
քում վարձից դուրս Պողուն պետք ե տալին ամ-  
բողջ հոտից ելի մի գառ, վորպես շիշիկ՝ ու-  
տելու համար։ Ալդ ել նա ստանում եր այն գեպ-  
քում, յերբ տարվա վերջը հոտը հանձնում եր  
տերերին առանց պակասորդի։ Պողին պարտափոր  
եր հոտն անվնաս պահպանել զողից, զալից և  
ամեն տեսակ զաղանից։ Քալլի և զողի տարած-  
ների համար նա պարտափոր եր վնասները վճարել  
տերերին։ Վորովհեակ ինքը վոչինչ չուներ, այդ  
պատճառով նա պատասխանատու յեր իր վար-  
ձով և իր անձով։ Յերբեմն պատահում եր, վոր  
նրա վարձն ու շիշիկը ծածկելով հոտին հասած  
վնասները, նա ստիպված եր լինում դրա հաշ-  
փին ավելորդ տարիներ ծառայել տերերին բո-

\*) Անասունների բացոթյա գիշերելու տեղը։

\*\*) Շան նստելու և հոտին հսկելու տեղը։

\* Համկալ-սակավաթիվ վոչխարատեր, վորն իր վոչ-  
խարները խառնում ե մեծ վոչխարատիրոջ հոտին։

Լորովին ձրի: Պողու հոտից գողություն անողները վոչ թե կողմանակի գողեր ելին լինում, առ տանու՝ իրենք վոչխարատերերը: Մրանք, ոգտը վելով Պողու խեղճ ու կրակ բնավորությունից, ամեն տարի պատժում ելին նրան, հաշվետվությունից հետո դուրս բերելով նրան պարտական: Շատ և պատահեր վոր Պողին գնացել և տուն զատարկ ձեռքով, չոր մահակն ուսին և աղաներն ստիպել են նրան «վնասները» ծածկելու համար ձրի ծառակել:

2

Արշոն սիրում եր վոչխարը քշել և հոր հետ հեռավոր հանդերը ման գալ: Նա դեռ շատ փոքը հասակից հոր համար գրեթե ողնականի զեր եր կատարում: Վոչխարի կթի ժամանակ Արշոն եր բերը\*) քշում: Սղաները թե կթվորները սառ ջուր ուզելիս՝ Արշոն եր կուլան ուսին աղբյուր վազում: Գառը մեր տալիս՝ Արշոն եր վազում մոտիկ բլրի գագտթը և գդակն ողում շարժելով գառնարածին «ՅԵԿ ԿԵԼ» կանչում: Մորից վորքացած գառներին Արշոն եր ուրիշ մալբերի ծծեցնում: Գառները մալբերից ջոկելիս՝ արդաեղ ել Արշոն եր հասնում: Մի խոսքով, մհծ մարդն

\*) Վոչխար կթելու տեղը՝ կթատեղ:



այնքան գործ չեր կատարում, ինչքան վոր Արշոն՝ իր փոքր տեղով։ Նա վոչ թե միայն իր հոր ոդնականն եր, այլ ամբողջ բինվորների։ Նա չեր սպասում, վոր իրեն բան ու գլխու դնեն։ Նա ինքն առաջուց գլխի յեր ընկնում և հասնում եր ամեն մեկի բանին։ Դրա համար ել ամբողջ բինվորներն Արշովի անունով ելին յերդվում, յերանի ելին տալիս Պողոսն և ասում.

—Ա՛ Պող, յերանի քեզ, վոր Արշովի նման ուշակալ վորդի ունես։ Մեր լակոտների ուշքը հըրեն խաղալու վրա լե, ամա քո Արշոն ձեռնակուլա լե, ձեռնակուլա։ Ել ինչ դարդ կունենաս, Պողի, յեթե դրա մերը մի քսան հատ ել բերի…

—Ինձ անիծում եք. դեռ վոչինչ, յերեք հատքերել ե, չեմ կարողանում նրանց հացն ու շորը հասցնել։ Պատասխանում եր Պողին նեղացած։

—Ա՛ Պող, քո վորդկերանց նշանն ուրիշ ե. գրանք վոր մեծանան, քեզ ել կպահեն, քո տունըն ել, դարդ մի անի, —սիրտ եր տալիս համկալներից մեծը։

—Հա, գիտեմ, վոնց կպահեն։ Յես չոմբախս ուսիս շատ եմ տունս պահում, վոր սրանք ել մեծանան մի~մի չոմբախս ուսին՝ տունս պահեն…

—Ուսումի տուր, ուսումի, ինչի՞ յես թողնում չոմբախս ուսին…

—Ուսումի՞։ «Չանն ով ե տպել յեղոտ թիքան»։ ուսումը, բալամ, մեղպեսների համար չի…—ասում եր Պողին խոր հառաջելով և կռո՛, հել կանչելով վոչխարը քշում։

Արշոն ել, աղաների համար աղբյուրից կուլայով սառ ջուր բերելով, բաժանում եր նրանց և շտապում հորն ոգնելու։ Հոտի մի թևն անցնելով, նա ել սկսում եր յետ մնացած վոչխարներին քշել, իր մանկական շվշվոցներով ձայնակցելով նրան։

3

Մի անգամ Պողին հոտի հետ հանդումն եր մնացել առանց լափնջու։ Ամբողջ գիշերն անձրեց նա մինչև վոսկորները թաց եր յեղել և նրա վրա մի ցամաք թել չեր մնացել։ Այդ դեպքից հետո նա հիվանդացավ և առողջանալու համար նրան հարկավոր եր միասնական տանը պառկած մնալ։ Հոտը պահող չկար։ Թաթոս աղան վորոշեց Պողու հաշվին մեկ ժամանակավոր հովիվ վարձել։ Արշոն ալդ բանն իմացավ թե չե, վազեց հոր խանչալը կապեց, լափնջին քաշեց ուսերին և գետնին քարշ տալով՝ հոր մեծ մահակն ել ձեռքն առած՝ սկսեց հոտը քշել դեպի արոտ։

— Այ տղա, եդ ինչ բանի լես: Վոչխար պահելը  
հաց ու պանիր չի. զեսն արի. զու չես կարող պա-  
հել, — հեռվից ձախն տվեց Թաթոս աղան, բար-  
կությունից վոտը խփելով գետնին:

— Աղա ջան, կարող եմ: Մինչև հերս կառող-  
ջանա, թող լես պահեմ, — խնդրում եր Արշոն,  
մի կողմից հոտն արագ հավաքելով:

— Զե, չե, յետ դառ. լես վոչխարս չեմ թող-  
նի մի մատը յերեխի հուսով, — սաստում եր Թա-  
թոս աղան, գոռալով:

— Աղա ջան, ես մի որը փորձի, ելի, տես,  
վոնց եմ պահում, — աղերսում եր Արշոն և հա-  
մառությամբ շարունակում վոչխարները քշել:

Թաթոս աղան — չե... Արշոն — հա... Վերջապես,  
Արշոն հոտը հեռացրեց աղի աչքերից:

— Ա' լակոտ, տես, հանգումը վոչխար չթող-  
նես. իրիկունն ել որով արխաջը կհավաքես, վոր  
տկանենք\*): — Վերջապես, Թաթոս աղան ստիպ-  
ված, պատվերներ տալով, գոռաց Արշոլի հետեից,  
յերբ նա հոտի հետ բավականին հեռացել եր:

— Լավ, լավ, աղա ջան, միտմիտ կաց. Պոյ-  
նախին ել եմ հետս տանում, ալ, տես. Պոյնախ,  
հե՛լ... Պոյնախ, հե՛լ...

Արշոն ուրախացած իր հաղթանակով՝ սկսեց  
կանչել Պոյնախին: Պոյնախը, ճանաչելով Արշոնի  
ձախը, խսկուին կալանչ գալով վաղեց նրա հե-  
տեւից:

4

Արշոլի ուրախությանը չափ չկար, յերբ վոր  
լսեց Թաթոս աղի պատվերները: Նա առաջին  
անգամ զգաց իր հովիվ լինելը: Հոր յերկար տա-  
փընջին հետեւից քարշ տալով, վորտեղ բարձր ժայռ  
եր տեսնում, գնում եր նրա կատարին կանգ-  
նում. մահակը թեկ տակին դեմ եր տալիս, վոնց  
վոր խսկական հովիվ և բարձրից հսկում վոչխար-  
ներին: Հեռվից անցորդները, աեսնելով մեծ  
յափնջավորին ժայռի կատարին, բարեներ ելին  
տալիս և բարեներ ստանում: Արշոն ել վորպես-  
զի չմատնի իր վոքրիկ լինելը, նրանց պա-  
տասխանում եր հսկակավորի ձախով:

Ալգպես Թաթոս աղի հոտն արածացնում եր  
Արշոն, մինչև հոր առողջանալը. Ժամանակին  
վոչխարը կիթ եր բերում. գիշերելու համար նըս-  
տեցնում եր արխաջում և ինքը յափնջու տա-  
կին կոչ յեկած՝ հսկում մի ծալրին. Պոյնախին  
ել, վորպես արթուն և հավատարիմ պահապանի,  
նստեցնում եր իր դոլանում՝ մըուս ծալրին:

\*.) Ստուգենք.

Թաթոս աղան, գիշերները մի քանի անգամ  
ստուգելով Արշովի պարտաճանաչությունը, ար-  
դեն իրեն վորոշ չափով հանգիստ եր զգում: Մին-  
չև անգամ նա մի գիշեր փորձեց Արշովի ուսից  
լափնջին գողանար բայց Արշոն վեր թռավ տե-  
ղից, գողի ուսին մահակով խփեց ու գոռաց:

— Աղա ջան, հասիր, գող ա լեկել:

— Արշոն, լես եմ, գող չեմ. քեզ փորձում ելի:  
Ապրես, շատ ապրես. այ, եղանակով զոչաղ կաց,—  
գովում եր աղան Արշովին:

Թաթոս աղան փորձեց կուզեկուզ մոտենալ  
արխաջին՝ վոչխար գողանալու նպատակով:  
Այդտեղ ել Արշոն վեր թռավ տեղից, Պոլնախին  
շփացնելով կանչեց.

— Պոլնախ ջան, հասիր, Պոլնախ, բռնի...  
գոնզ...

— Ա՛յ, ապրես, Արշոն, — ձայն եր տալիս աղան  
արխաջի ծալրից: Թաթոս աղան իր ալդ փորձերով  
Արշովին դաստիարակում եր, վորպես հովիվ: Ար-  
շոն ել իրեն հերթին ուրախանում, հրճվում եր,  
վոր թաթոս աղան, վերջապես իրեն ճանաչում  
ե վորպես հովիվ և իր հիվանդ հոր տեղն ու-  
րիշի չի վարձելու:

Արշոն շատ եր սիրում բարձրոնալ այն բար-  
ձըր սարերը, վորոնց հետ իր հայրը ծանոթաց-  
րել եր հեռվից: Նա միշտ լերազում եր նրանց  
մասին, նրանց անունները մեկ-մեկ հիշելով խո-  
սում եր նրանց հետ հեռվից, ինչպես իր խաղ-  
ընկերների հետ:

Ահա ալդ լերազներով տարված՝ նա մի որ վո-  
րոշեց հոտի հետ միասին Դալի-դաղի\*): Գլուխը  
բարձրանալ: Դալի-դաղն այն լեռնագագաթներից  
եր, վորոնք մոտիկ ելին Թաթոս աղի բինից:  
Արշոն մտածում եր, վոր լեթե առավոտան վաղ  
հուն արածացնելով քշի դեպի Դալի-դաղի գա-  
գաթը, կթի ժամանակ կարող ե վերադառնալ  
բինան:

Այս անգամ նրան հետաքրքրում եր վաչ թե հոտն  
արածացնելը, այլ տեսնել—դիտելը, թե Դա-  
լի-դաղից գենն աշխարհն ինչո՞վ ե վերջանում:  
Ալդ նպատակով նա Դալի-դաղի ստորին լանջե-  
րից սկսեց վոչխարներին քշել դեպի վեր: Ինքը  
հոտի մի ծալրին եր, Պոլնախը՝ մլուս: Կարծես  
Պոլնախն ել եր զգացել Արշովի նպատակը, Ար-

\*.) Դալի-դաղ-աղրբեջանական բառ ե, վոր նշանա-  
կում ե Խենթ-սար:

շոն անհանգիստ՝ վոչխարներին շարունակ քշում  
եր դեպի վեր, խոկ իմաստում շունը մյուս թեկից  
ոգնում եր նրան, թուլլ չտալով հոտին ցրվել  
արոտի համար: Վերջապես նրանք հասան գա-  
զաթին: Գազաթից մոտիկ, մի էերկար շերեփածե  
փոսում, վորին սարվորները կոչում են Չոմչալ-  
լու\*), մնում եր ձյունի մի հաստ շերտ. գրա-  
տակից քչքչալով աղբուր և հոսում և սառուցի  
տակ մի տեսակ թունել կազմում. թունելի տակ  
կախվել ելին սյունանման սառուցի լուլաները՝  
մեկը մյուսից հաստ ու բարակ, նրան տալով  
սառցե պայլատի շքեղ կերպարանք: Արշոն մտավ  
այդ թունելի տակը, հիացած բացականչեց. —  
Ես ինչ լավ բան ե... ես ով և շինել...

Նա ջրեց վոչխարներին, խմեցին նույն ջրից  
ինքը և Պոյնախը և նորից բարձրացան դեպի  
գազաթը: Հասան խսկական գաղաթին, վորից  
գենն այլիս բարձրանալու տեղ չկար:

Վոչխարներն արածում ելին գագաթի շուրջը  
փոված ալպիական բարակ մետաքսանման խոտը:  
Արշոն հիացմունքով նայում եր հեռուներում  
ցից-ցից կանգնած լեռնազագաթներին: Պոյ-  
նախը հետի լերկու վոտների վրա հենված՝ լայն  
բանալով բերանը բաց ու խուփ եր անում:

\*.) Չոմչալու-աղբը շանական. բառ ե, չոմչա-շերեփ:

Առաջին անգամ Արշոն զգաց, վոր Դալի-գաղից  
դենն աշխարհը չի վերջանում. նոր-նոր լեռնա-  
գագաթներ, խոր-խոր ձորեր են նրա առաջ բաց-  
վում: Նրան թվաց, թե այն բարձրության վրա  
ինքն ել այն սարերի չափ գարձավ և սկսեց բո-  
լոր սարերին մեկ-մեկ աչքն ածել և իր հորից  
լսած անուններով նրանց կիշել:

— ԱՌ են շատ հեռվում մեն-մենակ կանգ-  
նած սարը կարգարն ե, նրանից դեսը կեշանն ե  
(կրութուն), Մեծ ու Փոքր Լոքն ե. խոկ ենտեղ,  
աջ կողմու - Փամբակը, Զիբուխլուն, Աղլազանը  
(Լալկանը), Ղարախաչը (Սև խաչը), ևս կանգ-  
նած տեղու-Դալի-զաղն ե (Խենթ սար), գենը, ձախ  
կողմու - Զաթախը (Կապանը), Ովդարա-ձորը  
(Վորսա-ձորը), գենը - Գյող-բուլազը (Կապուլու-  
աղբուրը), Սավող-բուլազը (Սառնազբուրը),  
Ագրի-զառը (Ծուռ-ձլունը) և եղան անվերջ  
սարեր, սառցե տներ, ձորեր, աղբուրներ...ԱՌ,  
ինչքան լավ ե աստեղ, Դալի-զաղի գլխին: Այս-  
տեղից խոսում եմ իս բոլոր սարերի հետ. այս-  
տեղ մեծանում եմ, մեծանում, կարծես լիս ել  
նրանց չափ եմ դառնում, այ...

Արշոնի երջանկությունը Դալի-զաղի գլխին  
յերկա չակեց: Հեռվից, շատ հեռվից բարձրա-  
ցան սև սև աղբերը և սկսեցին հավաքվել Դալի-

դաղի դեմ ու դեմ: Արշովի սիրան ահ ընկավ.  
 Նա տեսավ, վոր լեռներն իրենց դեմքերը ծած-  
 կեցին-իրարից, և ամսերն սկսեցին վորոտալ:  
 Վորպեսզի վոչխարը ժամանակին հասցնի կթին,  
 նա հավաքեց հոտը և քեց Դալի-դաղից դեպի  
 ցած: Նա քանի իր հոտի հետ իջնում եր սարից,  
 այնքան վորոտմունքը սաստկանում եր: Պոլ-  
 նախն ել, կարծես, նախաղգում եր փոթորկի  
 մոտենալը. նա ել մի թնից կենտահաջ տալով,  
 ոգնում եր Արշովին հոտը քշելիս: Բայց վորոտ-  
 մունքը գնալով մոտենում եր, և փայլակը հը-  
 րեղեն թիչ պես այնպես եր փայլատակում ու  
 շրիփացնում Արշովի առաջ, վոր նրա աչքերը փակ-  
 վում ելին: Արշոն լսել եր հորից, վոր ալդ ժամա-  
 նակ պետք ե անգաղար վազել, վորովհետև կանգ-  
 նած ժամանակ կայծակն ավելի հեշտ ե խփում  
 մարդու: Յեվ նա, լավնջին հետեւից քարշ տալով,  
 շարունակ վազելով, հուշտ եր տալիս վոչխարնե-  
 րին դեպի ցած: Յերբ նրանք Դալի-դաղի ներքին  
 լանջերին հասան, անձրել նոր նրանց հասավ:  
 Նրանք արդեն մոտեցել ելին այն մեծ քարար-  
 ին, վորի ստվերի տակ Արշովի հալրը սովորու-  
 թիուն ուներ արևել թեժ ժամանակ հոտը քշելու:  
 Արշոն, ոգտվելով հանգամանքից, ինքն ել հոտը  
 քշեց նույն քարալը՝ փոթորկից ազատվելու  
 համար:

Հրեղեն շանթերը սաստկացան, անձրել հոր-  
 դացավ: Սարալանջերով ու ձորերով այնպիսի  
 հեղեղներ ելին հոսում, վոր, լեթե Արշոն իր հո-  
 տով պատսպարված շլիներ ալրի մեջ, նրանք հոտը  
 վաղուց քշած կլինելին, ինչպես մի տաշեղ: Այդ  
 արհավիրքի ժամանակ Արշոն ու Պոլնախը քա-  
 րալի տակ իրար գեմ նստած՝ նայում ելին ի-  
 րար լերեսի, ուրախանում և պարծենում, վոր  
 ազատվեցին հեղեղն լախտերից և ամեն ինչ  
 խեղզող հեղեղից:

Քիչ հետո լերկինքը պարզվեց և յերկնակա-  
 մարում լերեսաց կանաչ-կարմիրը-ծիածանը՝ մի  
 վոտով հենված Լալվարին, մրւսով՝ Աղլաղանին:  
 Փոթորկից և հեղեղներից սարսափած աշխարհը՝  
 ծիածանով զարդարված՝ ներքնից ժպտում եր  
 յերկնքին նույն նրբաշող դուլներով: Արշոն տես-  
 նելով ալդ բացականչեց.

«Պահ, պահ, ես ինչ հրաշք բան աւ աշխարհը,  
 քիչ առաջ զժոխք եր, զժոխք, իսկ հիմա դրախտ  
 ա դառեւ, դրախտ:

Արշոն միտ բերելով մեծերի խոսքը, թե՝ փո-  
 թորկից հետո ծիածանը լեզանակի մեղմանա-  
 լու նշան ե, իսկուն վոչխարներին դուրս ա-  
 րակ ալրից ու Պոլնախի հետ միասին շտալով  
 քշեց դեպի բերը:

2735  
40

Սև կաթ-2



կթի ժամանակն արգեն անցել եր, կթվորները լեկել ելին բերի շուրջը շարվել. Մի քանիսն ել գնացել ելին Արշոլին ու վոչխարներին վորոնելու, բայց, վոչ մի տեղ չգտնելով, հուսահատված վերադարձել ելին Թաթոս ազի մոտ ու սարսափով պատմում ելին նրան իրենց տեսած աղետների ու վնասների մասին:

— Թաթոս աղա, սարերը մեկ-մեկ ման եկանք, վոչ Արշոլին գտանք, վոչ ել վոչխարը, — ասաց կթվորներից մեկը:

— Ա՛ տղա, եղ ինչ եք ասում, ով դիտի, նրանց ել սելավը քշեց տարավ, — ծնկներին խըֆելով ասաց Թաթոս աղան:

Մենակ սելավն ա, — ավելացրեց մի ուրիշ կթվոր, — բա կայծակը չես ասում: Ենպես բինակա, վոր տասը-քսան վոչխար ե խփել:

— Մենակ վոչխարն ես ասում: Բա դուք չեք իմացել — Դալի-Բալրամի լերկու տղին, նշանվելու հասած աղջկանը լերեք հոգուն ել հենց իրենց դադի միջին կայծակն ենպես ա խփել, վոր տեղն ու տեղը սեւածութ են գտոել: Հրեն լերեքն ել սևացած, իրար կողքի դրած են. նրանց մերն ել, սարի գլխին դժված, դեղին քալաղին ձեռին փռփռացնելով, ենպես սուդ անում ու բարաթի

կանչում, վոր մարդու գլխին կրակ ա վեր դալիս...

— Պալ քո արեին մատաղ, Արշո ջան. ով գիտի, քեզ ել սելավը տարավ, քեզ ել կայծակ խփեց... — Այդ պատմությունը լսելով, հանկարծ ձչաց Արշոլի մայրը՝ Ազին. — Արշոլիս գտէք, Արշոլիս գտեք... Թաթոս աղա, ի՞նչ բանի լեք, ուր ե իմ Արշոն...

— Զանդ կարի, դանջղ. ի՞նչ ես ծիկա տալիս. իմ վոչխարները կորչելուց հետո թաղ քո Արշոն ել կորչի ու դուք ել տնօվանդով կորեք... Ծն, մի քար վերցրեք, գլխիս խփեցնք ե... յես վոնց հավատացի են լածիրակին, վոր վոչխարս պահի... — ասում եր Թաթոս աղան գաղագած, զառնալով բոլորին և յերկու ձեռքով խփում ինքն իրեն գլխին...

Այդ միջոցին հանկարծ վոչխարի ծայրը լերեավաց: Բոլորն ել մնացին զարմանքից բերանները բաց: Նրանք զեռ իրենց աչքերին չելին հավատում. բայց լերը տեսան Պոյնախին, վորը պոչը շարժելով հպարտ գալիս եր հոտի առաջին, ուշախությունից չգիտեցին, թե ի՞նչ անեն. բոլորն ել առաջ վագեցին և ուրախության ձիշերով ըջապատեցին Արշոլին.

— Պալ, Արշո ջան, եղ ինչ հրաշքով եք աղատ-

գել վոր ձեր մի մազն ել չի թրջվել, — հարցնում  
ելին կթվորները:

— Գիտեմ ինչքան վոչխար ու մարդ են ջար-  
պել կայծակն ու նեղեղները:

— Եդ ի՞նչ բախտ ես ունեցել, Արշո ջան, —  
ասում եր մայրը, փաթաթվելով վորդուն. — զուր  
չեն ասում, վոր ռաստծու պահած գառը դալը  
չի ուտիլ... Դու աստծու հրաշքով պահած ես,  
բար ջան...

— Ախպեր, վոչխարը ցանաք, Արշոն ցանաք,  
Պոլնախը ցանաք, դեռ յափնջին ել ցանաք. ես  
ի՞նչ հրաշք ա լեղել . . Բա սրանց վրա մի կաթիլ  
անձրև չի կաթել. եսպես բան կլինի, — ասում  
ելին կթվորներն ու շոշափում յափնջին և Արշու  
լի ցանաք ուտերը:

— Ի՞նչ աստված, ի՞նչ հրաշք. յես վոր վոչ-  
խարը շշելի Դալի-դաղի երի տակը, ով պիտի ա-  
զատեր մեկ, — վերջապես ասաց Արշոն՝ անտար-  
բեր ծիծաղելով և մեկ ձեռքով կողքին կանգ-  
նած Պոլնախի զլուխը շոյելով. — Ի՞լ, Պոլնախ  
ջան, ենպես չի:

Պոլնախը, բերանը լայն բանալով, հորանջեց  
և մի տեսակ ծմբոցով կարծես հաստատեց Ար-  
շովի խոռքը:

— Այ աղա, ուրեմն դու վոչխարը Դալի-դաղ

ես բարձրացրել, — հարցրեց զարմացած Թաթոս  
աղան. — տե՛ս, ուրիշ անգամ չհամարձակվես եղ-  
քան հեռուները տանել:

— Թաթոս աղա, ուրիշները վոր մոտիկ են  
պահել, պակաս են վնասվել, — մեջ ընկավ մի ծե-  
րունի կթվոր. — Արշոն իդիթ ա, իդիթ. Աղա,  
դրան արժան ա, վոր իր հոր վարձիցը դուքս  
մի լավ եգ գառ բաշխես, — ավելացրին մուսները:

— Խոստանում եմ, ախպեր, յեթե մինչև վերջն  
եսպես նամուսով լինի: — Պատասխանեց նըանց  
Թաթոս աղան:

— Ճիշտ ես ասում, աղա, — ուրախությունից  
կարմրելով բացականչեց Արշոն:

— Ճիշտ եմ ասում, բա. թող ես մարդիկ ել  
վկա լինեն. Յեթե չես հավատում, տուր ձեռքդ,  
խփիր...

Արշոն իր փոքրիկ ձեռքը խփեց Թաթոս աղի  
մոտաւ — փափուկ ձեռքին և կարմրտակելով նորից  
հարցրեց.

— Աղա, յեթե նամուսով լինեմ, զան ի՞նչ  
ժամանակ պիտի ստանամ:

— Վոչխարի արանքին նալելիս, սարից գաշտը  
քոչելիս, — պատասխանեց Թաթոս աղան, — դու  
մի գառն ունես, միայն զոչաղ կաց:

Պալմանը կնքված եր բոլոր կթվորների ներ-

կալութիւնք: Արշովի ուրախութիւնը չափ չկար: Նրան թվաց, թե բոլորի աչքի առաջ նա բարձրացավ իր աւտորվա բարձրացած Դալի-դաղի չափ:

6

Արշոն Դալի-դաղի աղետալի փոթորկից հետո սարերում դարձել եր ամենքի զրուցի առարկան և սիրելին: Նա իր հասակակիցների մեջ առաջինն եր: Բայց վորքան շատ ելին խոսում նրա ճարպիկութիւն և խրզախութիւն մասին, այնքան շատ եր շարժվում նախանձն ընկերների մեջ:

Արշոն հորից լսել եր, վոր սև վոչխարի կաթը համեղ ել լինում: Հոր հիվանդութիւն ժամանակ նա այդքանը փորձել եր հանդում և համոզվել: Յերբ կորեկի հացը կուլ չեր գնում, նա յերբեմն ծծում եր սև վոչխարի կաթի միայն մի մասը, վորպեսզի աննկատելի լիներ կթվորների համար:

Զնալած Պողին արդեն առողջացել եր և ինքն եր հոտն օրածացնում, բայց Արշոն ելի շարունակ հոր հետ գնում եր հանդը և նրան ոգնում, վորպես ձեռնակուլա: Նա սոված ժամանակ հորից ծածուկ յերբեմն ելի ծծում եր սև վոչխարին: Մի անգամ նա այնքան սոված եր, վոր սև վոչխարի կաթը բոլորովին ծծեց, մինչև կըշտանալը և գրեթե կըծքում վոչինչ չթողեց:

Վոչխարի կթի ժամանակը վոր հասավ, հայրու վորդի սկսեցին վոչխարը քշել դեպի բերը: Արշոն վոչխարը քշելիս շարունակ նայում եր այն սև վոչխարին, վորի կաթն ինքն արդեն բոլորովին դադարեկել եր հակառակ իր ցանկութիւն և կովում եր այն մտքի հետ, թե արդ գաղտնիքը հայտնի հորը, թե վոչ:

Մի բան, վոր մինչև հիմա վոչ կթվորներն են հասկացել այդ գաղտնիքը, վոչ ել աղան, թող հայրս ել չիմանա: Իմ արածը լավ ե, թե վաս, թող իմ մեջ ել մնա: Ինչ արած, ե, մի քանի հարլուր վոչխարի կաթից ինձ մի վոչխարի կաթ չի հասնի, համ ել հորս պատմած հեքյաթը զմւր տ առում, թե սոված մարդն ամեն բան կանի... Այդպես մտածելով, Արշոն վորոշեց այդ մասին վոչ վոքի բան չասեր, հուսալով, վոր, ինչպես միշտ, այս անգամ ել աննկատելի կանցնի:

Արշոն վոչխարներին մաս-մաս դեպի բերն եր քշում: Հայրն ել բերի առաջ կանգնած՝ ոգնում եր կթվորներին: Թաթոս ազան ու իր համեկալները միասին կանաչների վրա նստած՝ խորսված ելին անուշ անում, վրան կարմիր գինի խմում, յերբեմն ել յերգում ելին և կատակներ անում: Կթվորներն ել բերի առաջ յերկու շարք

նստոտած՝ պարծենում ելին իրենց կթած վոչ-  
խարներով, թե վորն եամենից շատ կաթ տալիս...

— Ես ամբողջ հոտի մեջ Թաթոս աղի սև վոչ-  
խարի պես շատ կաթ տվող չկա. նա ամեն ան-  
գամ, այ, ես կովկիթը լցնում ա, կուղեք, կը-  
թեմ, տեսնք: Քեռի Պողի, Թաթոս աղի սև վոչ-  
խարն իմ կողմը քշի:

Սև վոչխարի անունը լսելուն պես Արշով  
սիրուը լքլքոցն ընկավ, գունը թուավ, նա ան-  
պես եր դողում, կարծես թե լերկաշարժից  
նրա վուների տակ գետինը շարժվելիս լիներէ  
Յեթե նա ալդ րոպելին հենված չլիներ իր վոչ-  
խարակալ փոքրիկ մահակին, ով գիտե, ուշաթափ  
ընկներ գետնին: Լավ եր, վոր նա բերի վերջումն  
եր կանգնած, և վոչ վոք չնկատեց նրա տագնա-  
պալից վիճակը:

Կթվորը սև վոչխարի կուրծքը լերկու ամի  
մեջ առավ, դես չոթացրեց, դեն չոթացրեց, կաթ  
դուրս չեկավ, սովորական կաթի թշոց ու փըշ-  
շոց չլսվեց, և նա՛ սաստիկ հերսոտած՝ դարձավ քեֆ  
անող Թաթոս աղին. — Ես ինչ բան ա, աղա. ես  
սև վոչխարի հետ ինչ ա պատահել. սա բոլորո-  
վին կաթից կտրվել ա. առաջ ես կովկիթը լըց-  
նում եր, իսկ հիմա այ, տես, ես առ

— Ինձ ինչի՞ լսե հարցնում, այ, Պողուն հար-  
ցրու, վոչխար պահողը նա լա, նա՛ կիմանա,

ասաց Թաթոս աղան և կովկիթը կթվորից վերց-  
նելով, մոտեցավ Պողուն:

Ա՛ Պող, ես ինչ բան ա, ուր ա սև վոչխա-  
րի կաթը: Պողին լուռեր, չգիտեր, ինչ պատաս-  
խանի: Նա սփրթնել եր. ներքին շրթունքը բո-  
ցավառված, չորացած գողգողում եր: Արշոն աշ-  
քերը հառել եր հոր աչքերին, սրտի լքլքոցով  
անհամբեր սպասում եր, թե ինչով պետք ե  
այս տրաքոցը վերջանա, լեթե նա գաղտնիքն  
ինքը չբանա:

— Ա՛ Պող, քեզ հետ եմ. անհամուս, ուր են  
ես սև վոչխարի կաթը, մի ձեն հանի լե. ինչ ես  
պապանձգել: Բա սև վոչխարի կաթն ես պետք  
ե լինի. — ալդ ասելով, Թաթոս աղան կովկիթով  
խփեց Պողու կրծքին և միջի լեղած կաթն ել  
թափեց նրա սև արխալուղի վրա. Պողու կուրծքն  
սպիտակ գունով ներկվեց: Արշոն գեռ բերի  
ծալրին գողգողում եր և աչքերը չեր հեռաց-  
նում հոր աչքերից: Հանկարծ տեսնելով հոր  
կուրծքն սպիտակ ներկված, նա ավելի սկսեց  
դողով ընկնել և սրտի գողով սպասում եր,  
դողովոցն ընկնել և սրտի գողով սպասում եր,  
թե հայրն ինչպես կպատասխանի Թաթոս աղին  
իրեն հասած խայտառակության համար:

— Ա՛ խալիսը, բա ես բան ա, . Բա ես ասու-  
գած կվերցնի — Վերջապես ասաց Պողին, աչ-

քերը լացակումած դառնալով կթվորներին և  
սրբելով կրծքից չաղ կաթը. — գուք տեսած եք,  
կամ լսած եք, վոր Պողին գողություն անմ:

— Տո, աննամուս, բա ես սև վոչխարի կաթն  
ով տ կթում, սև սատանանմն: Յես չգիտեմ, մեր  
պարմանում գրված ա — լեթե մի գողություն, մի  
հարամություն նկատեմ, գու քո տարվա վար-  
ձից զրկվում ես և վնասն ել վճարում ես...Հի-  
մա գու գիտես, սա պարզ գողություն ա, կամ  
դոմը, ով ե գողանում սև վոչխարիս կաթը, կամ  
թե չե գողը հենց դու յես. ել գուք դես ու  
դեն մի ընկնի:

— Ի՞նչ ասեմ, աղա. թե յես գող լինեմ, իմ  
վորդիքը կոտորվեն. թե չե, հո ինձ գուք տեղը գող  
ասողի ոջախը — տունն ու տեղն ար, եսպես մո-  
խիր գառնա. — ալդ ասելով, Պողին հուսահատ-  
ված ձեռքի մահակը մի կողմ շպրտեց, գետնից  
վերցրեց մի բուռը հող, ջուխտ ձեռքերը պարզեց  
դեպի լերկինք և հողը շպրտեց վերև:

— Եսպես պարզ, աչքարա բանի համար ել  
ի՞նչու յես գուք տեղը քեզ կամ ինձ անեծքաչոր  
անում: Կարճ — գողը տուք, կամ գողը դու յես:  
Ի՞նչ կասեք, ա խալիը — ասաց Թաթոս աղան,  
զառնալով իր հառկալներին և կթվորներին, վո-  
րոնք իսկույն հավանություն տվին նրան գը-



լուխների շարժումով։ Իսկ խեղճ Պողին հուսահատված յերկու ձեռքով սեղմեց իր դաշունի դաստակը և Թաթոս աղի արձակած դաստիճանի ծանրության տակ, աչքերը գետնին սեղուած՝ ֆարացած մտածելիս...

Այդ ըովելին Արշոն աչքի տակով դիտում եր հոր տանջանքները, վոր նա զող ե հոչակվում և զրկվում ե իր ամբողջ տարվա վարձից—տասնու հինգ գառներից։ իսկ ինքը մեկ գառան համար զոհում ե թե հոր պատիվը, թե տարեկան վարձը։ Հորը փրկել, թե՝ իրեն...Ահա այս յերկու ընտրանքի մեջ եր տանջվում Արշոն, յերբ հալրը, վեր բարձրացնելով գլուխը, վորպես մի ծանրացած ժայռ, հոգնած և ընկճված ձախով նորից դարձավ Թաթոս աղին։

— Բա ինչ անեմ, աղա, վոր դու հավատաս, վոր Պողին գող չի...Շատ եմ մտածում, բայց մի ճամբա չեմ դտնում...Մի կենտ բան ա մը-նում, ա խալխ, վոր ես դամեն հանեմ, ձեր առաջին փորս խրեմ, վոր հավատաք, թե Պողին արդար ե...Այդ ասելով Պողին հանեց դաշունը պատրանից և դեմ արավ ինքն իր փորին։ Բոլոր կթվորները ցնցվեցին և վեր թռան տեղերից։

— Աղա ջան, սև կաթը լես եմ ծծել, յես եմ

մեղավորը, իմ հալրը արդար ա, արդար—բացականչեց Արշոն, Թաթոս աղի մոտ վազելով։ Թող բոլորն ել իմանան՝ իմ հալրն արդար ա, արդար...

— Լավ, Պողի, մեղավորն ես լակուն ա յեղել. սրան ել հետդ հանդը չտանես, թե չե սաքո զլիին շատ փորձանք կբերի, — սառնութիամբ վորոշեց Թաթոս աղան։

— Լավ, աղա ջան, ինչ փորձանք եմ բերել. մեծ բան ե, վոր լերեք հարլուր վոչխարից մեկ վոչխարի կաթն ել մեզ պահողներիս տաք, — ասաց Արշոն նեղացած։ — սովից հանդում նվազում ելի, մի կտոր չոր կորեկի հացի վրա...

— Տեսնում եք սրան. սրա նշաններն ուրիշ են. դեռ վոչինչ, ուզում ա ինձ հետ կիսատար դառնա, վորովհետեւ իր հոր հիվանդ ժամանակը վաչխարս պահել ա. յես ել խոստացել եմ սրան մի գտու տալ, լեթե մինչեւ վերջը նամուսով կը-լինի. բայց սև կաթը լափելուց հետո ել կարելի լամ սրան վոչխարի մեջ թողնել։ Զե, Պողի, չըլ-նեմ, չիմանամ, վոր դու սրան ել հետդ հանդն ես տարել.

— Ի՞նչու, ես սարերը քննն են, վոր արգելում ես. քո գառն ել, սև կաթն ել քո զլիին կենան, դու մենակ կեր, վոր կշտանաս, — ասաց

Արշոն բարկացած և մահակը ձեռքին մարտական դիրք բռնելով՝ հեռացավ:

— Տեսաք, եղ լակոտն ինչ ասաց. մի դրան բռնեցէք, միջից կես անեմ, եւ թաթոս աղանուզեց հարձակվել, բայց Արշոն արդեն փախել եր:

— Բա եսպես աստծու գառը մարդուց ել ենպես զալում լակոտ: Չնեղանաս, Պողի, նա քեզանից չե...

— Ի՞նչ արած, աղա, դիմի ժամանակիցն աչ Յերեխեքս չոր ու ցամաք կոտորվածքի յեն, ինչ անեն, — պատասխանեց Պողին, խոր հառաչելավ:

— Դու ել կաշխատես, կունենաս. ի՞նչ ես շտապում... — Հուսադրեց նրան թաթոս աղան:

— Ո՞ւր այ բա չեմ աշխատում, վոր խախալի գլուխը բան չի ընկնում, — ասաց Պողին, ուսերը վեր քաշելով:

— Ա՛ Պող, կընկնի, կընկնի. համբերություն ունեցիր, ասաց թաթոս աղան, յերկու ձեռքը խփելով Պողու ուսերին:

— Ե՞ն, աղա, «մինչև առուն ջուր կընկնի, գորտան աչըլ դուրս կընկնի»: Պատասխանեց Պողին և սկսեց գառը մեր տալ:

Գառը մեր տալիս, Արշոնի բացակայությունը

բոլորն ել զգացին, բայց վոչ վոք չարտահարմակեց ալդ մասին՝ Թաթոս աղի քեֆին չդիպչելու համար:

7

Սև-կաթի պատմությունից հետո Արշոնի փառավոր անունը կոտրվեց: Բոլորն ել սկսեցին խեթ աչքով նալին նրան: Մանավանդ նրա հասակակից հարուստների տղաները շատ ելին ուրախացել, վոր թալի-կազի վոլթորկի հերոս Արշոնին սև կաթի գող են բռնել. իսկական անգան տեղ հիմա նրա անունը դրել են Սեվ-կաթ: Թե՛ խաղի ժամանակ, թե՛ ազբյուր գնալիս ամեն կռղմից ել նրան Սեվ կաթ են կանչում. մի խոսքով մի տեղ լերեալիս նրան հանգիստ չեն տալիս: Յերբ նա միամիտ անցնում ե, հաժողված լինելով, վոր իրեն վոչ վոք չի տեսնում, ուեկ ել տեսար հանկարծ մի տեղից լսվեց՝ Սեվ-կաթը, և նրան ամեն կռղմից միացան ուրիշները: Խեղան կարկտի նման տեղացող Սեվ-կաթը բառերից շփոթված՝ վազվում ե խենթի պես, վուպեսղի նրանց թունավոր հարվածներից ազատվի: Յերբեմն ել, չկարողանալով ազատվել Ջեղայնացած քար ու փայտ ե շպրտում աչ ու ձախ, բայց զրանով ել չի կարողանում զսպել լվակիներին և ստիպված՝ վազում ե նրանց առաջին,

մինչեւ վոր մի տեղ կծածկվի նրանց տեսողությունից:

Ալդ բոլորից հետո Արշոն վորոշեց, վոր իրեն ընկեր չունի. բոլոր մարդիկ ել նրա թշնամիներն են: Նա վճռեց ել լերբեք մարդամեջ դուրս չգալ, աշխատել միշտ մենակ և հետու լինել մարդկանցից: Ազդակես նա միշտ թափառում եր մենության մեջ, չեր խառնվում վոչ մի ընկերական խաղի: Նրա մտերիմներն ու խաղընկերներն ելին սարերն ու ձորերը, աղբուրներն ու առուները, ուր թափառում եր ինքն իրեն, նըրանցով լերջանիկ, վորովինետև նրանց մոտ միայն նա մոռանում եր Սեվ-կարն ու սեվ ընկերներին:

Չսալած թաթոս աղան արգելել եր Արշովին հոտն արածացնելիս հոր հետ գնալ հանդը, բայց նա լերբեմն ամենքից ծածուկ գնում եր հոտը գտնում հանդում. հանկարծ տեսնելով սև վոչխարին, հիշում եր սեվ-կարը, թողնում եր ու փախչում:

8

Մինչեւ աշնան վոչխարի խուզն ընկնելն Արշոն դուրս չեր գալիս մարդամեջ և նա իր մենության մեջ իրեն հանգիստ ու լերջանիկ եր զգում:

Նրան թվում եր, թե արդեն բոլորն ել մոռացել են Սեվ-կարի մասին, վորովինետև լերկար ժամանակ ալդ չարաբատիկ բառը նա չեր լսել: Ուստի վոչխարի խուզի ժամանակ նա վորոշեց գնալ հորն ոգնելու:

— Ո՛, բարով լեկավ... Սեվ կաթը... կիսը քո տեսնողացը. եղ վարտեղ ելիք մինչեւ հիմա, — հանկարծ գոռաց թաթոս աղան, լերը առաջինը նկատեց Արշովի լերկալը:

— Սեվ-կա՛քը, Սեվ-կա՛քը... Կրկնեցին խուզվորները:

Արշոն կատաղությունից շփոթված դեռ ու գեն ընկավ, մի մեծ քար ճանկեց և բոլորին թողած ընկավ թաթոս աղի հետեից: Թաթոս աղան զգաց, վոր տղան ջղակնությունից իրեն կորցրել ե, ել աղա-մաղա չի ճանաչում, սկսեց փախչել և հորդորել նրան.

— Սպասի՛, բալա ջան, սպասի՛, Սեվ-կար. եղ ինչ բանի յես, քարն արին ա...

(Ազդակես ասելով, թաթոս աղան փախչում եր Արշովի տոջիից):

— Քո Սեվ-կարը սև արին պիտի շինեմ քո գլխին, արին, — գոռում եր Արշոն թաթոս աղի հետեից ընկած:

— Արշոն ջան, բալա ջան, հանգիստ կաց: Ալդ



ասելով, Պողին Արշովին պինդ բռնեց հետեից:  
Սրշն ճանաչեց նոր ձաշնը, հերսը հանգարավեց  
իր խոկական անունը լսելուն պիս. ձեռքի քարը  
շպրտեց մի կողմ:

— Ի՞նչ անեմ, ապի ջան, ինչ. Թաթոս ազի  
սև կաթը խեղդում ա. ինձ խեղդում. բա որա-  
նից յերբ պիտի աղատվենք, ե...

— Բալա ջան, Արշ ջան, արի, տանեմ տուն.  
թե ուզում եռ աղատվել որանց լերեսը դուրս  
մի գա:

Յերբ Պողին վորդուն տանում եր տուն, Թա-  
թոս աղան հետեից կանչում եր, վորպես «ուր-  
տացավ».

— Գիր անել տուր, գիր, Պողի, թե չե Սեվ-  
կարը փշանում ա, ամսոս ա... Եզուց մոլլա  
Դուրբանին կուղարկեմ. թող քանի նոր ա, գիր  
անի:

Մի առավոտ Արշոն քնատեղից վեր կացավ,  
տեսավ իր արխալուղի միջին յեռանկունի ձե-  
մով կտորի մեջ թիլիսմներ են կարել. ինչ վոր  
թղթի կտորներ ել ջրի մեջ գցած՝ մայրը տվեց  
իրեն, վոր նրա ջրեցը խմի. Արշոն զալրացած  
պոկոտեց մեջքի թիլիսմները, ջուրն ել, թիլիսմ-  
ներն ել միասին շվրտեց դեպի Թաթոս աղի  
ալաջուխի (մեծ գրանի) կողմը, վորի առաջ ձեռ-  
քերը մեջքին դրած նա ման եր գալիս: Հետո  
բարկութիւն արցունքներն աշքերին՝ նա դար-  
ձավ մորը.—Այս, Սզի ջան, ինչ եք ուզում ին-  
ձանից. հերիք չի են անխիղճ աղան մեզ սո-  
ված կոսորում ա, դուք ել մի կողմից նրա խոս-  
քովն եք ընկել, ուզում եք ինձ ել մոլլաներով  
տանջել: Այ, գիր անելուն Թաթոս աղան ա՛,  
Թաթոս աղան, վոր մի թաս կաթան համար ինձ  
են որն ա գցել, վոր մնացել եմ տանը բանտարկ-  
ված...»

9

Վոչխարի խուզից հետո սարերին սկսում ե  
մոտենալ աշունը:

Վոչխարատերերը նայում են վոչխարի արան-  
քին, ալսինքն հովիվներից հաշիվ են պահան-  
ջում, պարզում են, թե վարքան և պակսել և ինչ

պատճառներով՝ հարգելի, թե անհարգելի: Հար-  
գելին համարվում եր վորեւ հիվանդութիւն  
պատճառվ ընկածը. իսկ գողի, գալի և ալ ան-  
հայտ պատճառներով պակսորդների համար պա-  
տասխանատու լեր հովիվը ինքը. նա պարտա-  
վոր եր ալդ վնասը վճարել տիրոջը կամ իր սե-  
փական ոռնիկով կամ, լեթե ոռնիկը չեր ծած-  
կում տիրոջ վնասը, ալդ գեպքում նա պարտա-  
վոր եր լինում ալդ վնասի հաշվում մի տարի ևս  
ծառալել տիրոջն առանց վարձի: Բանի տարի  
Պողին ծառալել եր Թաթոս աղի մոտ, զրեթե  
վոչ մի տարի նա իր վարձը լրիվ չեր ստացել:  
Թաթոս աղան, ոգտվելով նրա միամիտ և թուլ  
բնավորութիւնից, հաշվի որը միշտ շառ ու շիւ-  
բաղ եր գցում. նրա աշքերին այնքան հող ու  
մոխիր փչում, վոր Պողին վոչ միան իր վար-  
ձիցն եր զրկվում, ալի մի բան ել ինքն եր  
մոտում պարտ Թաթոս աղին: Թաթոս աղան սո-  
վորութիւնն ուներ իր պառավ վոչխարներին ա-  
մեն տարի ջոկել և ծախել վորպես սերնդի հա-  
մար անպետք. Նա, ոգտվելով Պողու միամառ-  
թիւնից, ալդ գործը կատարում եր ան ժամա-  
թիւնից, լերբ Պողին վորեւ գործով բացակայում եր  
հոտից: Ահա ալդ պակսորդներն ելին, վոր Թա-  
թոս աղան միշտ գուրբուեր բերում վորպես անպետք

կորած և բարդում խեղճ Պողու վզին, վորպես  
պարտք: Այդ պատճառով ել Պողին լերբեք չեր  
կարողանում ազատվել Թաթոս աղի պարտքից,  
միշտ մնում եր «սեերես»: Այդ որը վոչ միայն  
Պողու, ալև բոլոր հովիմերի պարզերես կամ  
սեերես դուրս գալու որն եր:

Պողին անգրագետ եր: Նա իր հաշիվը պահում  
եր իր մեծ մահակի վրա դանակով նշաններ ա-  
նելով: Նա արդ մահակն աչքի լուրսի պես պա-  
հում եր, վորպես իր հաշվեմատաւանը: Նա մի քա-  
նի անգամ իր վորդի Արշովի հետ իր մահակի  
հաշիմերն ատուգել եր, և հայր ու վորդի ու-  
րախ եին, վոր այս տարի Թաթոս աղի առաջ  
պետք և առանց պարտքի գուրս գան և լրիվ  
տասն ու հինգ գառն ստանան, իրանք ել վոչ-  
խարատեր գառնան: Արշոն սրտով ուզում եր  
հաշվի որը հոր հետ գնար, բայց հայրը չթողեց,  
ասելով: — Ա՛յ վորդի, զուր ես գալիս: առանց  
են ել Թաթոս աղան վրեդ հերսոտած եւ հրես  
իրենց լակոտներին վրեդ հայ կանի, հուշտ կը-  
տան քեզ: լավն են ա, դու տանը մնա:

Արշոն սրտատրոփ տանն սպառում եր, վոր  
հրես հայրը՝ տասն ու հինգ գառն առաջն արած  
կդա:

Յերբ իր մահակին նշան արած հաշիվը լրիվ

տվեց, Պողին դարձավ Թաթոս աղին: — Աղա, ինձ  
հիմա ինչքան ա հասնում:

— Քեզ իսկի մի ուլ ել չի հասնում: Դու քո  
մահակի հաշվին ևս նայում, իմ դավթարին ել  
նալի, լե: Իմ դավթարով տասն ու հինգ ջան մե-  
ծավոչխար ա տանշան պակսել: Ես չողունով\*)  
ընկավ, ես ցեխում մնաց... Բա սրանք ուր են,  
սրանք վմբտեղ մնացին, — ասաց Թաթոս աղան,  
մատներն ուզզելով Պողու աչքերին:

— Լավ, աղա, բա եղ բան ա: Եղքանը վնաց  
ա պակսում, — բերանը բաց, հարցըց Պողին շի-  
փարած:

— Յես ինչ գիտեմ. քեզ հարցըռու. վոչխար  
պահողը դու լես, զու ել լավ կիմանաս:

— Թե յես-յես եմ — լիս վոչ վոչխար եմ կե-

րեր, վոչ վոչխար եմ կորցըեր. եղ ինչ հրաշք ա:

— Ի՞նչ հրաշք, ոս կաթն ել եր հրաշք: Ես  
տղեն, վոր զու ունես, զես շատ վորձանքներ  
կըերի քո գլխին: Նա մոլի բան ա գտուել. նա  
ինչ ասես, կանի...

— Ուրեմն նա լա կերել: Աղա, ինչի՞ լես յե-  
րեխիս վրա զուր շառեր մողոնում: Զե՞ վոր իմ  
հիվանդ ժամանակը նա ազատեց վոչխարդ Դալի-  
հեղեղից ու կալծակներից. եղ ել շնոր-  
դակալության տեղն ա:

\*) Փոթորիկով:

— Հենց եղ այս. ինչ վոր արել ա, հենց են  
ժամանակն ա արել: Նրանից առեն բան ել  
սպասելի լա: Նա վոր մեծանա, մարդ կուտի...

— Մարդ ուտողն ել ես դու, մարդ խաթողն ել...  
Վերջն ինչ ա միտքդ, զարձս տալիս ես թե չե...

— Ա! Պող, հաշվով քեզ վարձ չի հասնում,  
բայց ինչպես դամազլուզ, մի գառը կտամ, տար:

— Յերբ վոր եղակես ա, քո դամազլուզն ել  
կտրվի... Դու ել իմ որին հասնես, — ասաց Պողին  
զալրացած և մահակն ուսին դատարկ ձեքով գը-  
նաց իր վրանը:

Մի առավոտ Թաթոս աղի գառնարածը մի սպի-  
տակ գառ ուսին բերեց Պողու վրանը. և ասաց.

— Քեռի Պողի, ես գառը Թաթոս աղան ուղար-  
կեց ձեզ համար դամազլուզ: Քեզ ել կանչում ա,  
նոր պալման գրելու համար:

— Յետ տար, յետ տար, շանից դամազլուզ... ինձ  
պետք չի. — ասաց Պողին զալրացած, գառը յետ  
տալով:

— Ես մի գառը Թաթոս աղան ինձ պարտ ա,  
սա իմ գառն ա, — արդ ասելով, Արշոն վրա թը-  
ռավ. գրկեց գառն ու փախավ:

10

Զնացած Թաթոս աղան նորից մարդիկ ուղար-  
կեց միջնորդելու, վոր Պողուն տանի իր մոտ,  
բայց Պողին յերդվել եր—ել յերբեք այն հրեշի

40

յերեսը չտեսնել: Տարիների ընթացքում Պողին  
արդեն հասկացել եր, վոր Թաթոս աղան, իր  
թուլլ յերակը գտնելով, հանգիստ կերպով շա-  
հագործում եր իրեն: Յեկ գուր չեր, վոր Պողին  
բոլոր միջնորդներին արհամարհանքով պատաս-  
խանում եր.

— Զե, բավական ա, նա ուզում ա ինձ նո-  
րից իր թալակը քաշից Յերեխիս անունը մի թաս  
կաթան համար կոտրեց, անունը Սեվ կաք գրեց,  
զգվացրեց... Շարունակ շառեր մոգոնելով, իմ  
ել վարձը կարեց... Հինգ տարվա դաս քիչ ա,  
հիմի ել ուզում ա նորից խարի: Զե, իրան ա-  
սեք, վոր ել չի տեսնի: Պողին խամ եր, հիմի  
գլխի լու ընկեր ուստա յա դառել... ել գալիք  
գլխի լու ընկեր ուստա յա դառել... ել գալիք  
գլխի լու ընկեր ուստա յա դառել... Պող կորչի,  
Պողինախն ել նրա դունն ա ծառալում: Թող կորչի,  
նա մարդ չի...

Վորպեսղի Սեվ կաքի մգծավանջն ալլս  
չտանջի իր Արշուն, Պողին խապառ հեռացավ  
չտանջի իր Արշուն, Պողին խապառ հեռացավ  
թաթոս աղի թաղ ու թառակից: Արշոն ել  
արգեն կամաց կամաց մոռանում եր իր տիսնուք  
պետքեն կամաց կամաց մոռանում: Նրան թվում եր, վոր գերջա-  
պատճությունը: Նրան թվում եր, վոր գերջա-  
պատճությունը: Նրան թվում եր, վոր գերջա-

41

նաց ուրիշի մոտ ծառալելու, չար աղան ել,  
նրանից վրեժ լուծելու համար, ամեն տեղ տա-  
րածեց Սեփ կարի պատմությունը. և Արշողին  
տեսնելուն պես, գարձալ ամեն կողմից գոռում  
ելին - Սեփ կարք... Նորից լցնում ելին խեղճ  
տղայի սիրտն անասելի դառնությունով և թու-  
նավորում նրա մատադ կյանքը:

Արշոն ստիպված եր իր կյանքը անցկացնել մի-  
այն իրենց տանը, իր փոքրիկ յեղբայրների և  
այն մի հատիկ սպիտակ գառան հետ, վորի ճա-  
կատը նա կարմիր գույնով ներկել եր և ձեռքի  
սովորեցրել: Պողու տան միակ ուրախությունն  
այն գառն եր: Արշոն և յեղբայրներն այն գա-  
ռանը սիրում ելին, ինչպես իրենց չորրորդ յեղ-  
բորը: Նրա անունը գրել ելին Դիզի-Բա: Քառն  
այնպես եր տիրացել արդ անվանը, վոր Դիզի-  
Բա լսելուն պես, ուր ել վոր լիներ, դորովավեց  
մայունով, թաշկոտալով, առաջ նետվելով, պիտի  
գար, հասներ կանչողին: Պողին և իր ընտանիքը,  
հինգ տարի թաթոս աղի մոտ տանջվելով, արդ  
մի գառն ելին աշխատել. և իզուր չեր, վոր նը-  
րանք տնով, տեղով, մեծ ու փոքր փալփալում  
ելին նրան և դողում ելին նրա վրա, ինչպես  
մի անհուն գանձի վրա: Բայց բոլորիցն ել ավե-  
լի սերա կերպով կապված եր Դիզի-Բալի հետ



Արշոն: Նա ամենքին ել ասում եր, վոր Դիգի-  
Բան ինքն և աշխատել Թաթոս ազի վոչխարը  
Դալի-դաղի փոթորիկից ազատելու համար...

— Յես Դիգի-Բային ենպես լավ պիտի պա-  
հեմ, վոր շուտով մեծանա և ենքան բազմանա,  
վոր Թաթոս ազիցն ել ուներ դառնանք, վոր  
մենք ել կաթով, լուզով, պանրով լիանանք... —  
ասում եր Արշոն իր փոքր Խղբալրներին՝ Սաշի-  
կին և Վահանիկին. և, ազգպիսի գեղեցիկ յերազ-  
ներ հյուսելով Դիգի-Բայի շուրջը, նա հա-  
ճախ ուրախացնում եր փոքրիկներին և գրղ-  
ռում նրանց ցամաքած ախորժակը ապագա կա-  
թի և լուզի գետերով:

Արշոնի պատմածների ազգեցությունն որորի  
վրա ալնքան խորացել եր փոքրիկների որտում,  
վոր նրանք մի բոպե չելին հեռանում Դիգի-Բա-  
յի մոտից. յերեկը նրան տանում ելին դաշտն  
արածացնելու, իսկ յերեկոները ամենամաքուր  
խոտերից բերում ելին առաջը զնում, վոր նա  
ուտիր Յերբ յերեխաները զիշերը պառկում ելին  
քնելու, Դիգ-Բան նստում եր նրանց անկազնի  
մոտ, մուշմուշալով վորոնում եր և նայում յե-  
րեխաներին: Իսկ յերեխաներն Արշոնի պատ-  
մածներով տարված քնում ելին, սիրուն յերազ-  
ներ տեսնում և առավոտան իրար պատմում.

— Մեր Դիգի-Բան ենքան շատացել եր, վոր մեր  
տունը կաթով, լուզով լցվել եր...

Պողու յերեխաներն ասրում ելին այդ անուշ յե-  
րազներով Դիգի-Բայի հետ, կրծելով կորեկ հա-  
ցի չոր կտորները:

## 11

Աշնան մի ցուրտ առավոտ, յերբ Պողու յե-  
րեխաներն իրենց հնամաշ, գզգզված անկողնում  
կուչ յեկած քնած ելին, խրճիթի խարխլած դուռը  
շատ կոպիտ կերպով թխկացրին: Յերեխաներն  
ահից ցնցվեցին: Դիգի-Բան, վորն ըստ սովո-  
րականին նրանց գլխավերնում հանգիստ նստած  
վորոնում եր, ահից վեր թռավ տեղից և սկսեց  
աղիողորմ մայելով խրճիթում վաղվել:

Յերեխաների մալրը սրտի լըլքոցով գնաց  
դուռը բաց արեց, և, յերեք տղամարդ ներս  
մտնելով, բարկացած հարցըն նրան.

— Ես ուր ե Պողին:

— Պողին տանը չի լինում. Նա հանդերին  
վոչխար ա արածացնում: Զեզ մատաղ, ինչ եք  
ուզում նրանից. ինձ ասեք, — հարցըց Ազին  
վախեցած:

Ազին յերեքին ել ճանաչեց և հասկացավ, վոր  
նրանք լավ մարդիկ չեն: Մեկը տանուտերի

թիկնապահն եր, անունը Զարզանդ-շեկ, ծաղկատար գեմքով, չար կատաղի աչքերով, թուրն ու դաշտունը վրեն, ատրճանակը կողքին, մաթրախը ձեռքին, սևամազ փափախը գլխին—իսկական զարզանդ։ Մարդ չեր կարող նրա յերեսին ուղիղ նայել։ Տանուտերն ուրիշ թիկնապահներ ել ուներ, բայց հարկեր ժողովելու համար միշտ Զարզանդին եր ուղարկում, վորովինետև նա յերեք դատարկ չեր վերադառնում, ամենաազքատ տանիցն ել մի բան պոկում եր, տանում։ Նրան վոչ մի աղերսանք, վոչ մի արցունք չեր ազգում։ Նա անողոք եր։ Այդ բոլոր հատկությունների համար նա տանուտերի մոտ առանձին համարում ուներ։ Յերկրորդը տանուտերի ոգնական Մոսին եր—բարձրահասակ, բարակ, վրոց վոր մի շինարի, ցիցաչոր հին, յուղոտված շալոն գլխին, գեղին պղնձագույն պաշտօնական մեղալը կրծքի մի կողմից շղթալով կախ ընկած։ Յերրորդը հարկահան Պետոն եր—միջահասակ, նիհար մզած լիմոնի նման ցամաքած դեմքով, հարկահանության դավթարը կուան տակին։

— Դե, ինչ եք կանգնել, իրար յերեսի նալում,— ասաց բարկացած Զարզանդը հարկահան Պետոնին և ոգնական Մոսուն, վորոնք ուշիւուշի զիտում ելին Պողու խրճիթի մութ անկյունները։  
— Դե, շնուտ արեք ինչ վոր տանելու յենք, տա-

նենք... Մենք դեռ գնալու տեղեր շատ ունենք։ — Մենք ել եղ ենք մտածում, ելի. աչքն ենք ածում, բայց վոչինչ չի լել եռում, վոր տանենք, — ասաց ոգնական Մոսին աջ ձեռքը խրճիթի ներսը տարածելով։

— Լավ, ինչ կա, վոր ինչ տանենք. վոչ խալիչա կա, վոչ սամավար, վոչ ել մի պղնձակուժ։ Հըեն պոռւնդը կոտրած են հողակուժն ա, մեկ ել ես չուլերն են, վորոնց տակին յերեխեքը կուչ են յեկել. միթամ սա ել սրանց անկողինն ա. վայ աստված սա անկողին համարի, — ասաց հարկահան Պետոն, յերեխանների վրաչի չուլի մի ծայրից բարձրացնելով։ Յերեխանները վախից ծիկա տվին, կարծելով, թե իրենց վրաիլ միակ վերմակը խլում են։ Բայց Արշոն նորից ծածկեց նրանց և հանգստացրեց։

— Հիմա ինչ անենք. յես եստեղից դատարկ չեմ գնա, — ասաց Զարզանդը, նորից մաթրախով շրփփացնելով դռանը։ Շրփփոցի վրա հանկարծ խրճիթի մի մութ անկյունից գառը վախեցած՝ բարձր ձայնով մայեց։

— Բա են ինչ ա, վոր ասում եք բան չկա, նրանից լավ բան եք ուղում, — ասաց ուրախացած Զարզանդը, վազելով գառան մալոցի վրա։ Դիզի-Բան այնքան մեծացել ու գիրացել եր,

վոր Զարզանդը նրան կռան տակն առած՝ զուռով բերեց գեղի դուռը:

— Այ ձեր արեին մատաղ, յերեխաներիս ուրախությունն եղ մի գառն ա, եղ ել ուր եք տանում. բա մեղքը չենք... — ասաց Ազին, պինդ բռնելով Զարզանդի թերի:

— Ա՛յ քուլրիկ, ձեզ գեղական ու պետական հարկեր են գցել. նրանց հաշվումն ենք տանում: Հանգստացիք, որենքի մարդկանց չեն հակառակվիլ, — ասում եր ոգնական Մոսին, մի կողմից հարկահան Պետովին և թիկնապահ Զարզանդին նշան անելով, վոր տանեն:

— Ախր մեզ ի՞նչ ունենք, վոր մեզ պես գառն աղքատին ել հարկեր եք գցում. բա դուք մեզ չեք տեսնում, թե ես ի՞նչ որի լենք ապրում: Տեղով վոր կրակն ընկնենք, մեզանից մըկլահոտ չի վեր լինիլ. ենտես Ադամ մորամերկ ենք, — աղիողորմ լալով խնդրում եր Ազին, ցույց տալով իր կիսամերկ, լաթերով հազիվ ծածկված յերեխաներին:

— Դե, դու ել քիչ աղքատ ձևացիր, ե, — ասաց զարացած Զարզանդը, թեն ազատելով աղերսող կնոջից: Ես տարի մարդդ տասն ու հինգ դառը մենակ Թաթոս աղիցն ա ստացել:

— Վիշ, քեզ մատաղ, եղ ով ա ասում. վհնց

են եղակս ստեր մոգոնում, — ասաց Ազին, զարձանքից իր յերեսը պւճոկելով:

— Հարկերը բաժանելիս, Թաթոս աղան ինքն եր ասում, վոր Պողուն իր վարձի հաշվում տասնու հինգ գառն ա տվել, վոր հիմա Պողու թուքը քաղցր ա... նրան հարկից ազատել չի կարելի. ասում եր, դուք քանի կարաք, նրան բեռնեցեք: Դրա համար ել ձեզ ես տարի քառասուն մանեթ են գցել. այ, ուզում ես, տես դավթարը... — Բացադրեց հարկահան Պետոն, Ազու առաջ դավթարը բաց անելով:

— Բա դուք ել ձեր խիզճը վհնց կորցրիք, վոր Թաթոս աղի խոսքին հավատացիք: Հինգ տարի մեծ ու փոքր նրա դռանն աշխատելուց հետո եղ մի կենտ գառն ենք նրանից պոկել, են ել զոռով: Վայ, են հախ միայն տերն ել նրա տունը քանդի, վոնց վոր նա մեր տունը քանդեց, հա, — ասաց Ազին հուսահատ՝ ձեռքերը տարածելով գեղի յերկինք:

— Դէ, մենք ի՞նչ անենք, ա քիրս. եղ մեր բանը չիք: Թաթոս աղան մեր գեղի առաջին պաշտանին ա. նրա խոսքը գին ա գնում, նա վոր ասի՝ մածունը սև ա, պետք ա հավատանք, — ասաց Զարզանդը և գառանը, վոր մինչ ալդ բանտարկած ուներ իր յերկու վոտների արանքում, դուրս քաշեց, կռան տակն առավ, վոր տանի...

— Վար, Սպիրանց, Բիգի-Բան տանում են։  
Յերեխաները, ճշալով, մեկը մյուսի հետեւց  
վաղեցին դեպի Զարզանդը։ Արշոն, Սաշիկը,  
Վահանիկը կպան Զարզանդի թևերից, փեշերից  
և սկսեցին աղիողորմ լալով, քարշ ընկնել նը-  
րանից։

— Ո՞ւր ես տանում, մւր մեր Դիգի-Բան։ չեմ  
տա, չեմ տա, — գոռում եր Արշոն։ Իսկ Սաշիկն  
ու Վահանիկն ել կը կնում ելին նրա հետեւց։

— Մեր Դիգի-Բան տնըր, մեր Դիգի-Բան...

— Այ, ձեր Դիգի-Բան, առեք ձեր Դիգի-Բան  
— այդ ասելով Զարզանդն այնպես ուժգին թա-  
փահարեց իր չուխի փեշերը, վոր յերեխաները  
Դիգի-Բան, ճշալով, ընկան հատակին։ Բայց Ար-  
շոն տզրուկի նման իր բոլոր ուժով պինդ կպել  
եր Զարզանդի թևից և պոկ չեր գալիս։ Պետոն  
ու Մոսին ել աշխատում ելին Արշոյին մի կերպ  
բաժանել Զարզանդի թևից, բայց չեր աջողվում։

— Վերջապես հերիք այե՛, — գոռաց Զարզան-  
դը խիստ զալրացած, — ես լակոտն ուզում ամեղ  
հաղթի։ և նա մաթրախով մի քանի անգամ այն-  
պես ուժգին շրջփացրեց յերեխայի մեջքին, վոր  
Արշոն ուշագնաց փովեց հատակին։

Հարկահանները Պողու տնից տարան վերջին

գառը։ Յերեխաները կանչում ելին լալով՝ «Դի-  
գի-Բան, Դիգի-Բան...» Դիգի-Բան Զարզանդի թեկ  
տակից պատասխանում եր յերեխաներին ա-  
ղերսալի մայունով... Մալրը ջուր եր ցանում  
Արշոյի յերեսին, վորպեսզի նրան ուշքի բերի...»

12

Թեև Սպիր Արշոյի յերեսին ջուր ցանելով մի  
կերպ նրան ուշքի բերեց, բայց Արշոն դեռ յեր-  
կար ժամանակ գողգողում եր, վորովհետև Զար-  
զանդի մաթրախի հետքերը գեռ ցավից մումը-  
ուում ելին։ Մալրը հարկահաններից մի քիչ ողի  
ձարեց և նրանով մաթրախի դիպած տեղերն  
սկսեց մաժել։

— Ա՛յ, անիծվածներ, — ասում եր մալրը վեր-  
քերը մաժելիս, — լարաբ, որ կլինի, վոր ձեզանից  
ազատվենք։

— Սպիրանց, Սպիր, իսկ կմեռնեմ, լեթե մեր Դի-  
գի-Բան չազատեմ։ Առանց նրան մենք վհնց պի-  
տի ապրենք, — ամեն որ ասում եր Արշոն, խորը  
հառաչելով։

— Վոչինչ չկա, վորդի, — պատասխանում եր  
նրան մալրը, հուսաղելով, — որ միայն առող-  
ջացիր, ասոված վողորմած ա, մեղ համար ել մի  
դուռը կբացվի...»

Այս գեպքից հետո յերկար ժամանակ Արշուի  
ուշը գլուխը չեր գալիս: Նա մի տեսակ որ որի  
վրա հալվում եր, մինչև վոր անկողին ընկալի:  
Նրա աչքերից չեր հեռանում իր սիրելի գառը—  
Դիզի-Բան. Նրա ականջին շարունակ հնչում եր  
Դիզի-Բայի աղերսալի մայոցը: Նա հաճախ զա-  
ռանցում եր, և Դիզի-Բան կանչելով, դուրս եր  
թռչում անկողնից, յերկու ձեռքը տարածում ո-  
դում, բայց վոչինչ չգտնելով՝ նորից ընկնում  
եր անկողնում:

Ազի ջան, Ազի, չգիտես, ուր տարան իմ Դի-  
զի-Բան. Իես շատ եմ կարստել նրան,—հարցը-  
նում եր Արշոն մորը, յերբ սկսեց քիչ-քիչ վոտ-  
քի կանգնել:

— Ո՞վ գիտի, վորդի, կամ քաղաք ուղարկած  
կլինեն, կամ իրանք լափած կլինեն:

— Յես չգիտեմ, Ազի ջան, իես պիտի գնան  
իմ Դիզի-Բան գտնեմ:

— Զեռք քաշի, վորդի, ել դու չես կարող  
նրան գտնել: Հորդ կասեմ, քեզ համար մի նոր  
Դիզի-Բան ճարի, —հանգստացնում եր Ազին վոր-  
դուն:

13

Մի որ մալրը Սաշիկի և Վահանիկի հետ մի-  
ասին զնաց գետափը լվացք անելու: Արշոն մե-

նակ մալով, քըրբեց տան խնջիլքը և այնտե-  
ղից հանեց իր հին ժանգոտած դաշունը,  
մեջքին կապեց ու գնաց Դիզի-Բան վորոնելու:  
Նա հանգերն ընկած՝ դես ու դեն նայելով,  
Դիզի-Բան յեր կանչում և վորտեղ վոչխար եր  
պատահում, հետեիցն եր ընկնում, բռնում, տըն-  
տղում նրան. հետո տեսնելով, վոր իր Դիզի-Բան  
չի, բաց եր թողնում և գնում նորից վորոնելու:  
Գլուղի յերեխաները, տեսնելով նրան մենակ  
թափառելիս, հետեկցն ելին ընկնում և Սեվ-կարը  
կանչելով, քարեր ելին շպրտում նրա վրա: Ար-  
կանչելով, քարեր ելին սաստիկ կատաղում  
շոն սև կաթի մասին լսելիս սաստիկ կատաղում  
և իր ժանգոտած դաշունը պատխանից հա-  
եր և իր ժանգոտած դաշունը պատխանից հա-  
եր և իր ժանգոտած դաշունը պատխանից հա-  
եր Սեվ կար կանչողներին: Թա-  
թու աղան իմացավ իր յերեխաներից, վոր Սեվ  
կարն ուզում ե նրանց խանչալով կոտորի: Նա  
կարն լուսակուն լինդը տանուտերին, վոր գիտ Սեվ կա-  
րի կապը շուտով քաշի, միաժամանակ Զարզան-  
քին ել լավ խմեցընց, հարբեցընց, վոր նա ել  
գողմից իր բանը տեսնի... Տանուտերը Զար-  
զի կողմից իր բանը տեսնի... Տանուտերը Զար-

ներքնատունը, վորը միաժամանակ և փայտանոց  
երևանաւ:

Մալրն իմանալով Արշովի բանտարկության մա-  
սին, լեզապատառ լեկավ տանուտերի մոտ, վոր  
խնդրի նրան ազատելու մասին:

— Դիտե՞ս, պարոն տանուտեր, սա են դիմ տը-  
ղեն ահա, վոր հարկերը հավաքելիս հետո կըու-  
վում եր... Հիմա ել ուզում ա գեղի յերեխա-  
ներին խանչալով կոտորի... Ես տեսակ զժին  
ապա վճնող կարելի աք թողնել. գեռ սրան  
պետք ա մի լավ խրատել... — Զգուշացնում եր  
տանուտերին՝ կողքին կանգնած Զարդանդը:

— Ա՛ գլխիդ, արեիդ մատաղ, տանուտեր ջան,  
դա սուտ ախոսում: Իմ տղեն մի անմեղ, անշառ,  
նամուսով տղայա: Նրան՝ Թաթոս աղան ա գըժ-  
վացրել... Բա դուք խիղճ չունե՞ք. ինչու հա-  
մար եք նրան բանտարկել, — աղաչում եր  
Ազին, Զարդանդի և տանուտերի դեմ ծառս ելած:

— Դե՛, ձենդ, դանջդ, շատ մի խոսի, գնա հե-  
ռացիր, թե չե, տե՛ս, քեզ ել եմ պադվալը գը-  
շում: Դու վոր լավ մայր լինես, են դժի ձեռ-  
քին խանչալ չես դնի. դե՛, հեռացի, — սպառ-  
նաց տանուտերն Ազուն:

— Բավական չի Թաթոս աղան մեզ շորերով  
կերավ, հիմի պակասն ել դուք Եք թամամում:

Իմ վորդու ձեռքին խանչալը դնւք եք դնում,  
դնւք... Թե վոր արդարություն լինի, ալ, ձեզ  
պետք ե բանտարկել, ձե՛զ ե՛ր, հե՛լ աստված,  
աստված, զու ծուռ մարդկանց դատաստանն ա-  
նես... — ձեռքերը դեպի յերկինք պարզելով և  
արտասուքից խեղդվելով, Ազին գնաց՝ վիզը  
ծուռ:

— Պարոն տանուտեր, դրա արտասուքին  
միք մտիկ անի: Դրա տղեն վոր մեծանա, մեզ բո-  
լորիս ել կուտի. մենք չպետք ե թողնենք, վոր  
նա մեծանա, — վորոշեց Զարդանդը. իսկ Զար-  
դանդի վորոշումը, վորդես հավատարիմ թիկնա-  
պահի, տանուտերի համար որենք եր:

#### 14

Մըուս որը Ազուն հալտնեցին, վոր վորդուն  
աղատում են, թող գա տանի: Պողին ել իմա-  
նալով վորդու բանտարկության մասին, ալդ որը  
լեկել եր, վոր ինքն ել խնդրի: Նա ել ուրախա-  
ցած՝ Աղու հետ միասին գնաց գլուղվարչություն:  
Արշովին փալտանոցից հանեցին գրեթե կիսամեռ  
վիճակում և հանձնեցին հորն ու մորը: Մալրը  
գրկելով վորդուն, դարձավ Զարդանդին.

— Ե՛ր, ես ինչ ա պատահել տղիս հետ:

— Ո՞վ գիտի, գժի հետ ինչ ասես՝ կպատահի, — պատասխանեց սառն ու անտարբեր Զարդանդը:

— Սրա խանչալն ուր ա, որա հետ խանչալ տիեղել, բեր:

— Խանչալը մեզ հարկավոր ա գործի համար, — ասաց Զարդանդը, յերեսը շրջելով:

— Ա՛յ, գործի ու ցավի զաք, վոնց վոր մեզ ցավի մեջ ցցեցիք, հը... Գնանք, բալա ջան, գրնանք, քանի նոր շառի մեջ չենք ընկել, — ասաց Ազին և Պողու հետ Արշուի թևերից բռնած զուռվ հասցըին տուն:

Մարմնի ջարդվածների պատճառով Արշոն չեր կարողանում վոչ շարժվել և վոչ ել խօսել: Նա ծնողներին հազիվ կարողացավ հասկացնել, վոր Զարդանդը նրան բանտում խիստ ծեծել ե... բայց ծնողներն աղքատության պատճառով վոչ կարողացան անարդարության դեմ բողոքել, վոչ ել կարողացան խոշտանգված լերեխալին բժրշկության համար քաղաք հասցնել:

Մի քանի որից հետո Արշոն մահացավ: Նրա ծնողները — Պողին ու Ազին մեծ կսկիծով նրան թաղեցին այն բլուրի վրա, վորի մոտով անցնում ե սար գնացող քոչի ճանապարհը: Վշտա-

բեկ Պողին, մի անապաշ քար գլումելով, բերեց, դցեց վորդու գերեզմանի վրա, վորպես արձան: Իսկ անցնող գառնողներն այն բլուրը կոչեցին Սեվ կաթի բլուր:

1936 թ. նոյեմբեր  
Յերկան:



Պատ. խմբագիր՝ Ա. Առստամյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավլիափ լիաղոր՝ կ—4695. Հրատ. 4212.  
Պատգեր 6՝ Տիրաժ 4000  
Թուղթ  $72 \times 125$  Տաք 3 $\frac{1}{2}$  մամուլ.  
Մուկ մամ. 17. 2 $\times$ 0 նիշ. Հեղինակալին 1 $\frac{1}{2}$  մամ.  
Հանձնված և արտադրության 1 $\frac{1}{4}$  հունվարի 1938 թ.  
Ստորագրված և տպագրության 10 փետրվարի 1938 թ.  
Գինը 1 սուբլի

---

Գետհրատի տպարան, Յերևան, Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0401296

ԳՐԵՑ 1 ր. 152

11339



Վ. ՄԻՐԱԿՅԱ  
СЭВ КАТ  
ГИЗ АРМ ССР ЕРЕВАН

